ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«10 » հոկտեմբերի 2019թ.

ՀՀ Լոռու
մարզպետարան
մարզպետ Ա.Ղուկասյանին

N111

Հարգելի պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում Շենավան համայնքի ղեկավարի թիվ 23-Ա որոշումը:

Առդիր 1/մեկ/ թերթ:

Համայնքի ղեկավար Մ.Մխիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 10 » հոկտեմբերի 2019 թվականի N 23 - Ա

ՀՈՂԱՄԱՍԻՑ ՄԻԱՎՈՐԻ ԱՌԱՆՁՆԵՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43 - րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 5 - րդ հոդվածի 5 - րդ կետով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9 - ի թիվ 838-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ կառավարության 09.06.2005 թվականի թիվ 877-Ն որոշման 5- րդ հավելվածով 0003-0021 ծածկագրով Շենավան համայնքին փոխանցված, համայնքային սեփականություն հանդիսացող, կադաստրային քարտեզի 06-086-0003-0021 ծածկագրով բնակավայրերի նշանակության հողամասից առանձնացված 0.05764 հա բնակելի կառուցապատման հողամասի սահմանները, համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:
2. Շենավան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-086-0003-0021 ծածկագրով բնակավայրերի նշանակության հողամասերից առանձնացված 0.05764 հա բնակելի կառուցապատման հողամասը առանձնացնել և համարել, որպես առանձին գույքային միավոր:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցում կատարելու և համայնքային սեփականության իրավունքի վկայականներ տրամադրելու համար:

Համայնքի ղեկավար՝ Մ.Մխիթարյան